

ԱՐՇԱԼՈՒՅՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ՁՈՒՐ ՄԻ՝ ՀԱՆԴԳՆԻՐ

Պոեզիան կա սոսկ ձյուն մաքրության մեջ,
Հեռու ժխորից, վազքից այս համառ՝
Ատու՛մ է չնչին մեր պայքարն անշեջ՝
Ձուր մի՛ հանդգնիր՝ չես լինի անմահ:

Կապույտի թռչուն կամ լեռան արծիվ՝
Ի՞նչ ունի նա մեր սրտերում անսեր,
Սարսափ է կաթուն աչքից մեր հարցի,
Մենք քայլող աճյուն՝ նողկալի, զազիր:

Մահու հրաշքն է շրջում ամենուր,
Վխտում է չարը, իշխում է անահ,
Երկինքը չկա՛ մեր սրտում անհուր՝
Քաղաքներ գիտենք, ոճիրներ՝ անարգ:

Մեր խոսքն է փքուն՝ մի մթին բարբառ,
Կամ թե գետնաքարշ օձ է անիծյալ,
Ու չգիտենք մենք երկնքից մի բառ,
Սիրո բարբառը՝ հեռավոր՝ անցյալ...

Այնինչ՝ գիշերը մնում ենք աննիրհ,
Ինչ—որ թունավոր մի կրքից մղված,
Ծգնում առօրյան՝ մթին ու նանիր,
Չափածո խոսքում տեսնել պատկերված:

Կա չնչին մի բան այդ մութ խոսքերում՝
Անկրակ, հանգած կյանքի մասին ժանտ՝
Ապրում է մեզնից պոեզիան հեռու՝
Կապույտի թռչուն կամ երկնային շանթ...

ԵՐԳ ԳՈՐՈՒԹՅԱՆ

Գոհ եմ երկնքից սրտով հավիտյան,
Որ ներշնչանքն է զատել թանաքից,
Որ և հոգևոր բացառիկության
Տառապանքներն է շռայլել նա ինձ:

Նրա շնորհն է սրտիս մեջ ներհուն,
Եվ դատողության ձյունները մանուկ
Հալչում են, ցողում իմ հոգու հեռուն,
Ուր բացվում է մեղմ ծաղիկն հրանունկ:

Գարունն է տալիս թռչչքի թևեր,
Եվ կարող եմ ես խավարը հերքել,
Երկնքին նայել, թևե՛լ դեպի վեր՝
Թողած սատիրան և ողբը ներքև:

Ներշնչանքն այս չլիներ եթե,
Մահու դևի դեմ, հոգի՛ս, գուցե քեզ
Լա՛յի պարտված՝ կյանքում այս նյութե.
Գոհ եմ քեզանից, արև՝ բոցագես...

Որ այս կրթված դարում մարդակեր
Ես մի աշխարհ եմ անկրկնելի,
Որ փայփայում եմ պատրանքներ, հանգեր...
Եվ իմ հուրն է ձեզ անտեսանելի:

Ասես քուրմ եմ ես մի հնադարյան,
Եվ մտքերս ունեն մի լուսակենտրոն,
Ինձ ի՛նչ խավարն այս ամենուրեքյան՝
Բոցավառ եմ ես, որպես մի կերոն...

Որպես մի կերոն, գնում եմ առաջ՝
Ուրիշ եզերք է բացվում հոգուս դեմ,
Եվ կյանք կա իմ մեջ, երկնքի հառաչ,
Եվ գոհ է սիրտս իր բախտի հանդեպ...